ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հուլիսի 2022թ. N ՄՈ-444-2022

ք. Արմավիր

<<ՏԱՐՈՆԻԿԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արմինե Ղավալյանի 2022 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ղավալյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմինե Ղավալյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Մանուկյանին:
3. 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ <<Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Մանուկյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արմինե Ղավլյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

18.07.2022

X

VERIFIED OCSP 18.07.2022 17:09:16 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ